PRESS RELEASE

PR22/231

ԱՄՀ աշխատակազմն ավարտում է այցը Հայաստանի Հանրապետություն

Անհապաղ հրապարակման համար

Առաքելության ավարտին կազմվող մամուլի հաղորդագրությունները ներառում են ԱՄՀ աշխատակազմի թիմերի հայտարարությունները, որոնք երկիր կատարած այցից հետո ներկայացնում են նախնական եզրահանգումները: Սույն հայտարարության մեջ արտահայտված են ԱՄՀ աշխատակազմի տեսակետները և պարտադիր չէ, որ ներկայացնեն ԱՄՀ Գործադիր խորհրդի տեսակետները: Առաքելության նախնական եզրահանգումների հիման վրա աշխատակազմը կկազմի զեկույց, որը ղեկավարության կողմից հաստատվելու դեպքում կներկայացվի ԱՄՀ Գործադիր խորհրդին՝ քննարկման և որոշման կայացման համար:

- *Ուկրաինական պատերազմի տարածվող ազդեցությունների՝ նախկինում սպասվածից փոքր ինչ ավելի գսպված լինելու պայմաններում և տարվա առաջին չորս ամիսներին տնտեսական ակտիվության բարձր տեմպից օգտվելով՝ 2022 թ. ՀՆԱ-ի աճն ակնկալվում է, որ կհասնի 5 տոկոսի, իսկ գնաճը կանխատեսվում է, որ ժամանակավորապես կբարձրանա՝ նախքան տարեվերջին մեղմանալը:*
- *Խիստ անկայուն արտաքին միջավայրից ելնելով, քաղաքականության առաջնահերթություններն են՝ մակրոտնտեսական կայունության պահպանումը և տնտեսական բարեփոխումների շարունակումը՝ ավելի բարձր, կանաչ և ներառական աճի խթանման համար:*

Վաշինգտոն, ԿՇ – 27 հունիսի, 2022 թ. Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) թիմը, Իվա Պետրովայի ղեկավարությամբ, 2022 թ. հունիսի 20-24-ն այցելել է Հայաստան: Իշխանությունների հետ թիմի քննարկումների ընթացքում անդրադարձ է կատարվել վերջին զարգացումներին, տնտեսական հեռանկարին և իշխանությունների քաղաքականության առաջնահերթություններին, որոնք կարող են ԱՄՀ-ի օժանդակությամբ ապագա ծրագրի հիմքում լինել: Այցի ավարտին տկն. Պետրովան արել է հետևյալ հայտարարությունը.

«Հայաստանի տնտեսական ակտիվությունը 2022 թ. առաջին չորս ամիսներին (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ) աճել է 9.4 տոկոսով՝ պայմանավորված ներքին սպառմամբ և ներդրումներով, շինարարության, զբոսաշրջության, ֆինանսական, անշարժ գույքի և ՏՏ ոլորտների օժանդակությամբ և արտաքին եկամուտների ու կապիտալի խոշոր ներհոսքի խթանմամբ: Գնաճը մայիսին արագացել է՝ կազմելով 9 տոկոս (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ)՝ ներքին աշխույժ պահանջարկի, առաջարկի սահմանափակումների և սննդամթերքի ու վառելիքի համաշխարհային գների բարձրանալու հետևանքով: Բյուջեի ընդհանուր դիրքը 2022 թ.առաջին եռամսյակում հավելուրդային էր՝ տնտեսական ակտիվությանը համահունչ եկամուտների հավաքման բարձր ցուցանիշի և ծախսերի թերակատարման շնորհիվ: Բանկային համակարգը պահպանել է ամրությունը, իսկ դրամն ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է:

700 19th Street NW
Washington, DC 20431
USA

«ԱՄՀ աշխատակազմի կանխատեսմամբ իրական ՀՆԱ-ն 2022 թ. կաճի շուրջ 5 տոկոսով՝ պայմանավորված ներքին պահանջարկով և տարվա առաջին չորս ամիսներին տնտեսական ակտիվությանբարձր տեմպից օգտվելով: Սպասվում է գնաճի ժամանակավոր բարձրացում՝ նախքան տարեվերջին մեղմացումը, երբ դրամավարկային քաղաքականության նախկին գործողությունները և դրամի վերջին արժևորման ազդեցության փոխանցումն իրենց լիարժեք ներգործությունը կունենան: Անհրաժեշտ է, որ ՀՀ կենտրոնական բանկը պատրաստ լինի ըստ անհրաժեշտության դրամավարկային քաղաքականության դիրքի ճշգրտմանը՝ միաժամանակ փոխարժեքին թույլատրելով լինել շոկի կլանիչ: Այնուամենայնիվ, վտանգը, որ արտաքին եկամուտների և կապիտալի վերջին ներհոսքի պատճառով Հայաստանը կարող է կտրուկ հակառակ ընթացքին առերեսվել, արտարժութային պահուստների ավելի մեծ բուֆերների վերաստեղծում է պահանջում: Քանի որ տնտեսությունը գրեթե ամբողջ հզորությամբ է գործում, այն լրացուցիչ հարկաբյուջետային խթանի պահանջ չունի, և անհրաժեշտ է, որ իշխանությունները եկամուտների գերակատարումները խնայեն, հակառակ դեպքում գնաճային ճնշումները կարող են պահպանվել:

«Կարևոր է մակրո-ֆիսկալ-ֆինանսական կայունության պահպանումը՝ Ուկրաինայի պատերազմի, Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցների և համաշխարհային ֆինանսական շուկայի տատանողականության աճի պայմաններում, գնաճի ուղղորդումը դեպի ՀՀ ԿԲ նպատակադրած 4 տոկոսը և հարկաբյուջետային բուֆերների վերականգնումը՝ աճի համար նպաստավոր և ներառող քաղաքականության միջոցով: Կառուցվածքային քաղաքականության ուշադրության առանցքում անհրաժեշտ է, որ լինի տնտեսական դիմակայունության ձևավորումը, այդ թվում՝ կլիմայի փոփոխության նկատմամբ, կապիտալի շուկաների զարգացումը, թվայնացմանը և պետական կառավարման բարեփոխումներին հետամուտ լինելը, կառավարման, թափանցիկության և հարկաբյուջետային ռիսկերի կառավարման բարելավումը, ՀՆԿ/ՊՄԳ համակարգի լիարժեք գործարկումը և ներդրումներով առաջնորդվող, գիտելիքահենք և արտահանմանը միտված աճի խթանումը: Ողջունելի է իշխանությունների կողմից առողջապահության և կրթության բարեփոխումների միջոցով մարդկային կապիտալի ստեղծման շեշտադրումը: Անհրաժեշտ է, որ նշված բարեփոխումների տեմպը հարկաբյուջետային տեսանկյունից շրջահայաց լինի և հարկաբյուջետային կանոններին համապատասխանի: Անհրաժեշտ է նվազագույն և միջին կենսաթոշակների աստիճանական բարձրացում՝ ըստ փուլերի, աշխատուժի մասնակցությունը խթանող և կենսաթոշակային համակարգի երկրորդ բաղադրիչը պահպանող միջոցառումների հետ միասին:

«ԱՄՀ աջակցությամբ նոր ծրագրի շուրջ քննարկումներն ակնկալվում է սկսել սեպտեմբերին:

«ԱՄՀ թիմը շնորհակալություն է հայտնում Հայաստանի իշխանություններին, զարգացման գործընկերներին և դիվանագիտական հանրույթին՝ արդասաբեր քննարկումների և համագործակցության համար»: